Ժամանակագիրը կ'ըսէ թէ «Շաս ժամանակի յեռոյ, մինչ հաք ի Ս. Գեորգ եկեղեցին» Սամաթիա, կու գան կ'ըսեն թէ այդ ապաշնորհ քահանան եկած է։ Դարանաղցի զայն կը կոչէ և անկէ բացատրութիւն կը պահանջէ իր արարքներուն համար և կ'ըսէ. «կաց, մնա՛, որ Կեսարացին զայ. ի հետ նորա դատաստանաւ մնութիւն առնեմ եւ դատապարտեմ զքեզ չարաչար, որ շատոց խրատ լինի»։ Այս սպառնալիքին առջև Նաղաշ Ղազար քահանայ, վասնզի Կեսարացիէն «ուժ առեր եւ զօրացեր» էր, ամէն տեսակ նախատինք և հայհոյանք կ'ընէ, և Դարանաղցի իր համբերութիւնը կորսնցնելով՝ իր աշակերտին՝ Սիմէոն Աբեղայի հետ փառաւոր կերպով կը ծեծէ և դուրս կը հանէ զայն (նոյն, էջ 116)։

Նաղաշ կ'երթայ Կ. Պոլիս եկող Կեսարացիին ընդ առաջ, գանգատելով որ «վասն զի նախանձուն զիս յայս հայս հատոյց ոմն վարդապետ անուն, զի Յակոբ վարդապետի կողմանցն է» (նոյն)։

Այսպէս կը գրգռէ Կեսարացին որ հինէն արդէն ոխ ունէր Յակոբ վրդ. Զէյթունցիի դէմ։

Կեսարացի իրեն կը յանձնարարէ լուռ մնալ, վասնզի ինքն «այնպիսեաց աղագաւ» կու գայ «յԸստանպոլ» և կը խոստանայ անոր վրէժը լուծել։